ՀՏԴ : 929:891.981.09 Դեմիրճյան + 82.035

Doi:10.54503/0135-0536-2025.2-304

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*

Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, գրաքննադատ, գրականագետ, թարգմանիչ, մանկավարժ, ազգային-պետական և գրական-մշակութային գործիչ, Հայաստանի գրողների միության (ՀԳՄ) և ժուռնալիստների միության անդամ Պետրոս Դեմիրճյանի կենսական բազմակողմանի ուղին ավելի քան կեսդարյա պատմություն ունի, որի մեջ արտացոլված է մեր հոգեմտավոր կյանքի մի զգալի ժամանակահատված, մշակութային, ավելի կոնկրետ՝ գրական զարգացման մի մեծ, դժվար և խիտ շրջան՝ 1970-ականներից մինչև մեր օրերը:

Պ. Դեմիրճյանը ծնվել է Երևանում 1950 թ. մայիսի 30-ին: 1957–1967 թթ. սովորել է Երևանի Ռաֆֆու անվան դպրոցում: Այնուհետև, 1972-ին՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, աշխատանքի է ընդունվել ՀԳՄ «Գրական թերթ»-ում՝ որպես գրաքննադատության բաժնի գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ (մինչև 1998 թ.): Հրապարակել է արդի գրական ընթացքին, գրականության տեսական խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ՝ այդ ամենն ամբողջացնելով նաև «Ժամանակը և գրականության զարգացումը» հետազոտությամբ, որն իբրև թեկնածուական ատենախոսություն, պաշտպանել է ԵՊՀ-ում 1981 թվականին: Աշխատությունն այնուհետև հրատարակվել է առանձին գրքով (Երևան, 1986, 220 էջ):

Զուգահեռ Դեմիրճյանը զբաղվել է նաև թարգմանական գործունեությամբ՝ հայ ընթերցողի դատին հանձնելով Վ. Պեկելիսի «Քո հնարավորությունները, մարդ» (1979), Ն. Պետրովիչի «Զրույցներ գյուտարարության մասին» (1980), Հ. Դուբախի, Ռ. Տաբերի «1001 հարց օվկիանոսի մասին և 1001 պատասխան» (1983), Ա. Գպանոպուլոսի, Է. Բեկոնի «Ատլանտիդա. առասպելի ետևում ճշմարտությունն է» (1985), ավելի ուշ՝ Վ. Սանսոնեի «Քարեր, որ հոգի ունեն» (2009) գիտահանրամատչելի գրքերը:

Բավական բուռն է եղել Պ. Դեմիրճյանի գործունեությունը Հայաստանի անկախացման սկզբի տարիներին (1980-ականի վերջ – 1990-ականի սկիզբ): Այդ շրջանում ակտիվ մասնակցություն է ունեցել Էստոնիայում հայկական մշա-

---

* *Ներկայացվել է 22. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

կութային ընկերության ստեղծմանն ու գործունեությանը, ընկերության «Վահագն» թերթի հրատարակմանը, կազմել (բանաստեղծ, թարգմանիչ Բաբկեն Սիմոնյանի հետ) և Բելգրադում հրատարակել է «Կնիժևնա ռեչ» սերբական գրական թերթի՝ հայ գրականությանը նվիրված հատուկ համարը (16 էջ), Հանրային հեռուստատեսությամբ ու Հայկական ռադիոյով վարել է «Բանավեճի ակումբ» և «Գրական անդաստան» գրական-մշակութային հաղորդաշարերը:

Անկախացումից հետո հետագա տասնամյակներին՝ գրական-գիտական-մշակութային աշխատանքներին զուգահեռ, Պ. Դեմիրճյանն ակտիվ գործունեություն է ծավալել նաև ազգային-պետական, հասարակական-լրագրողական ասպարեզներում: 1998–2000 թթ. աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության և քարոզչության վարչությունում (մամուլի բաժնի պետ), 2000–2009 թթ.՝ ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում (գլխավոր մասնագետ, վարչության պետի տեղակալ), 2011–2013 թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հասարակության հետ կապերի բաժնում (բաժնի պետ), ապա՝ 2013 թ. նույն նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ում (տնօրենի խորհրդական): 1995–1997 և 2000–2005 թթ. նա դասավանդել է Երևանի Հր. Աճառյանի անվան համալսարանում: 2013–2023 թթ. վարել է ՀԳՄ վարչության քարտուղարի պաշտոնը: 2010 թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող:

Պ. Դեմիրճյանի ծավալած բազմակողմանի գործունեությունն ու գրական-գիտական վաստակը գնահատվել են ինչպես պետական, այնպես էլ հասարակական, մշակութային մարմինների կողմից: Տարբեր տարիների արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի (2014), Ռուսաստանի գրողների միության Մոսկվայի կազմակերպության Ա. Ս. Գրիբոեդովի անվան գրական մրցանակի (2014), ՀԳՄ «Վաստակի համար» մեդալի (2020), Ֆրիտյոֆ Նանսենի անվան Ոսկյա հուշամեդալի (2015), «Արաբկիր համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման՝ պարգևատրվելով հուշամեդալով (2009), ՀԳՄ Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակի և այլն:

Պ. Դեմիրճյանի հոգեմտավոր զարգացմանը հետևելիս հստակորեն երևում է, որ նա, անցնելով բարդ, իրարամերժ ժամանակների միջով, երբեք չի դավաճանել ինքն իրեն, հավատարիմ է մնացել իր համոզմունքներին: Նրա գրականագիտական տաղանդի լիարժեք բացահայտումը տեղի ունեցավ Անկախության շրջանում, երբ գրական մամուլում և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, ուսումնական և այլ հաստատությունների գիտական պարբերականներում մեկը մյուսի ետևից սկսեցին հրատարակվել արդի ու դասական հայ պոեզիային և արձակին նվիրված նրա հոդվածներն ու մենագրությունները («Վարք Ինտրայի», 2003, «Տիրան Զրաքյան (Ինտրա) կամ «Հեքիաթի» իրականությունը», 2016), որոնք ունեն գիտական լուրջ մակարդակ, լայն ընդգրկում, փաստական և տրամաբանական ամուր հիմքեր, պատմական ճշգրիտ մոտեցում և դիրքորոշում: Նա կազմել և արևելահայերեն ուղղագրության է փոխադրել նաև Ինտրայի գլուխգործոց երկը՝ «Ներաշխարհ»-ը (2006):

Պ. Դեմիրճյանի՝ և՛ քննադատական (ժամանակակից ընթացիկ գրականություն), և՛ գրականագիտական (գրական պատմության, անցյալի դասական արժեքների և գրականության ամբողջական զարգացման) աշխատանքների բնորոշ կողմերն են.

1) հավասարակշռությունը, որն օգնում է նրան ազատ մնալու բոլոր տեսակի դեռևս լրիվ չհաստատված, չհիմնավորված ծայրահեղություններից, զգայական և դեռևս գիտական ճշգրիտ ձևակերպում չստացած դատողություններից և հետևություններից, երևակայության ակտիվ միջամտություններից, որոնք կարող են տեքստն ավելի հետաքրքիր դարձնել, բայց չունեն գիտական հիմնավորում,

2) ճշգրտությունը, որը նրա աշխատանքային հիմնական սկզբունքն է, նրա, այսպես ասած՝ «կատեգորիկ իմպերատիվը», այն չափանիշը, որով նա մոտենում է փաստերին, տվյալներին, աղբյուրներին, ինչպես նաև՝ մտքերին, կարծիքներին, այն ամենին, ինչը վերաբերում է տվյալ հեղինակի անձնավորությանը, կենսագրական հանգամանքներին,

3) գլխավոր խնդիրները երկրորդական հարցերից տարանջատելու, տարբերակելու և աշխատանքի մեջ հիմնական ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելու ձգտումը, որը գիտական տեքստը դարձնում է ավելի ամբողջական, իսկ աշխատանքի կոնցեպցիան՝ ավելի կառուցիկ, առանց ավելորդ կուտակումների,

4) առանձին հեղինակների (մասնավորապես՝ Տ. Զրաքյանի և Ե. Տեմիրճիպաշյանի) ինքնատիպության և անհատական ոչ ստանդարտ հոգե-աշխարհների ազդեցությունների որոնումը ստեղծագործությունների ընդհանուր կատարման վրա, որոնք կարող են վճռական նշանակություն ունենալ այդ ստեղծագործությունների համար (արտաքին աշխարհի հետ դրանց կոնֆլիկտային հարաբերությունների բնույթն ու եղանակը, որոնք ամենևին էլ երկրորդական չեն),

5) գիտական լեզվի պարզ, հստակ շարադրանքը, առանց բարդացումների և խճողումների (որոնք հաճախ են հանդիպում նման տիպի աշխատանքներում):

Ըստ այդմ՝ չնայած բազմակողմանիությանը, Պ. Դեմիրճյանի գործունեության հիմնական ասպարեզը գրականագիտությունն է, որտեղ նրա գիտական-ստեղծագործական միտքն իրականացվում է լավագույն ձևով: Կարելի է ասել, որ դա նրա առաջատար ոլորտն է, նույնիսկ ընթացիկ գրականությանը նվիրված նրա առանձին հոդվածները, գրաքննադատությունները, անդրադարձները հիմնվում են գրականագիտական որոշակի չափանիշների վրա: Բնականաբար, գրաքննադատությունը կտրված չէ գրականագիտությունից (կամ գրականության պատմությունից), բայց քննադատությունը, մինչև գրական նոր երևույթի վերլուծությունը և արժեքավորումը, ըստ էության, առաջնորդվում է նախևառաջ ստեղծագործությունից ստացած իր անմիջական տպավորությամբ, սուբյեկտիվ մոտեցմամբ, իր անձնական ճաշակով և նախընտրությամբ, որը կարող է նրան տանել սխալ ուղղությամբ (դա, ի վերջո, առաջին կարծիքն է տվյալ ստեղծագործության մասին, որտեղ սխալվելու հնարավորությունը չափազանց մեծ է): Այդ պատճառով, Պ. Դեմիրճյանը գրական նոր երկը գերադասում է դիտել գրական ընդհանուր համատեքստի մեջ՝ ձգտելով լինել ավելի օբյեկտիվ և ճշգրիտ: 1970–1980-ական թվականներին (հատկապես՝

«Գրական թերթ»-ում աշխատած տարիներին) նոր սերնդի պոեզիային և արձակին նվիրված հոդվածներում նա աշխատում էր լինել հնարավորինս օբյեկտիվ և անսխալ (մեծ մասամբ դա նրան հաջողվում էր): Նա հետամուտ էր այդ թվականներին նոր սերնդի գրական որոնումներին, նոր տիպի գրականության ստեղծմանը, որը հետևանքն էր ոչ միայն ներքին զարգացման տրամաբանության, այլև համաշխարհային գրականության որոշակի ներգործության: Դրանով է պայմանավորված նաև Պ. Դեմիրճյանի հետաքրքրությունը Սփյուռքի գրականության նկատմամբ, ինչպես նաև հայ գրականության (ընդհանրապես՝ հայ մշակույթի) ամբողջական և միասնական համակարգային ըմբռնմամբ, երբ արևելահայ, արևմտահայ ու սփյուռքահայ գրական շարժումները դիտվում են որպես մեկ միասնական գրական ամբողջություն:

Զափազանց կարևոր են Պ. Դեմիրճյանի հետաքրքրություններն արդի և դասական հայ գրականության միջազգային կապերի և առնչությունների, ինչպես նաև XIX դ. երկրորդ կեսերից արևմտահայ գրականության մեջ եվրոպական արժեքների ներմուծման և ուսումնասիրության խնդիրների նկատմամբ, որոնք ստեղծագործական նոր «իմպուլսներ» հաղորդեցին մեր գրականության ընթացքին (հատկապես՝ եվրոպական ռոմանտիզմը, որը, լինելով արևմտյան, այսինքն՝ քրիստոնեական մշակույթի զարգացման օրինաչափ երևույթ, հոգեհարազատ դարձավ հայ հեղինակների, մասնավորապես արևմտահայ գրականության մեջ, Պետրոս Դուրյանից անմիջապես հետո հանդես եկած հայ բանաստեղծների համար (Թովմաս Թերզյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Տիրան Զրաքյան), որոնց ստեղծագործական քիչ ուսումնասիրված հարցերին են նվիրված Պ. Դեմիրճյան գրականագետի հիմնարար ուսումնասիրությունները: Հայ գրականության մեջ հանիրավի մոռացված այս նշանակալից հեղինակների կյանքի և ստեղծագործական խնդիրներով առաջինը սկսեց զբաղվել հենց նա: Խորհրդային գրականության կլիշեների մեջ դժվար տեղավորվող այս հեղինակների նկատմամբ ժամանակին ստեղծվել էր մերժողական «լուսանցքային» վերաբերմունք, որով նրանք հայտարարվում էին գաղափարապես խոտորված, հայ իրականության համար օտար, միստիկական կամ «հոգեխախտված», մինչև վերջ չկայացած հեղինակներ, որոնց նկատմամբ «չի կարող լինել լուրջ մոտեցում» (միակ բացառությունը Ալբերտ Կոստանյանի մի քանի հոդվածներն էին, որոնց շուրջը ստեղծվել էր «լռության պատնեշ», ձևացնելով, թե ոչինչ էլ չի եղել): Ձեռնարկելով կարևորագույն այս հեղինակների կյանքի և ստեղծագործությունների գիտական մանրակրկիտ ուսումնասիրությանը, Պ. Դեմիրճյանը նախ ժխտում է նրանց շուրջը ստեղծված անբարյացակամ վերաբերմունքը և ցույց տալիս այդ հեղինակների անառարկելի մեծ դերը հայ մշակութային զարգացման մեջ, նրանց համամարդկային և համազգային արժեքը, հոգևոր որոնումների փիլիսոփայական-գեղարվեստական բարձր նշանակությունը հայ գրականության (մասնավորապես՝ արևմտահայ գրականության) զարգացման համար: XX դարասկզբի պոլսահայ իրականության մեջ վիթխարի հեղինակություն ունեցող Տիրան Զրաքյանի (Ինտրա) կյանքին և ստեղծագործության գիտական ուսումնասիրությանը նվիրված «Վարք Ինտրայի» և «Տիրան Զրաքյան (Ինտրա). կամ «հեքիաթի իրականությունը» մենագրություններում Պ. Դեմիրճյանն առաջին անգամ գիտական լուրջ հետազոտության է ենթարկում Տ. Զրաքյանի գրական ամբողջ ժառանգությունը՝ «Ներաշխարհը», «Նոճաստանը» և

պոլսահայ մամուլում հրապարակված նրա բազմաթիվ հոդվածները: Իհարկե, խոսքն այստեղ Հայաստանի գրականագիտության մասին է. Սփյուռքի գրականության մեջ այդ գրողի մասին ստեղծված է պատկառելի գրականություն, որը, սակայն, ունի ֆրագմենտար բնույթ ելնելով Սփյուռքի հոգեմտավոր առանձնահատուկ իրավիճակից: Վերլուծությունները գլխավորապես կենտրոնացած են Տ. Զրաքյանի «Ներաշխարհի» շուրջը. Բնականաբար, «Ներաշխարհը» նրա գլխավոր ստեղծագործությունն է, նրա ներքին կյանքի գիրքը, ուր խտացված են գրողի աշխարհայացքի բոլոր շերտերը, նրա բարդ, կրոնափիլիսոփայական, գեղագիտական, հասարակական գաղափարները, Հոգու և Ոգու որոնման նրա տառապանքները, Աստծո ներքին զգացողության և ներըմբռնման նրա պոետական մեդիտացիաները, բնության և գեղեցկության էքստազային վերապրումները: Դրանցում նա գտնում է Աստծո ներկայության գաղտնի և բացահայտ ձևերը (գաղտնի՝ ներքին խմաստների, խորհուրդների, այսպես ասած՝ «ներաշխարհային», և բացահայտ՝ բնության արտաքին, նյութական, պլաստիկ), որոնց կարելի է մտահասու լինել միայն պոետական բացառիկ վիճակների, բարոյական ինքնակատարելագործման և լեզվական կատարյալ վերամարմնավորման միջոցով:

Զգտելով լուծել «Ներաշխարհի» ժանրային հարցը՝ Պ. Դեմիրճյանը այն չի համարում փիլիսոփայական տրակտատ (թեև ստեղծագործությունը լեցուն է փիլիսոփայական խորհրդածություններով, որոնք սակայն չեն խանգարում նրա պոետական հյուսվածքին), ոչ էլ արձակ ստեղծագործություն, այլ՝ պոեզիա, բանաստեղծական յուրատեսակ հայտնություն, որ գրված է արձակ լեզվով (հայ գրականության մեջ հազվադեպ հանդիպող երևույթ, որ հետագայում հիմք է դառնում ազատ ոտանավորի համար):

XIX դարի վերջին տասնամյակների և XX դարի սկզբների պոլսահայ ամենաինքնատիպ և «ամենապարադոքսալ» բանաստեղծներից էր Եղիա Տեմիրճիբաշյանը, որի՝ իր ժամանակին ունեցած մեծ հեղինակությունը և նրա մասին եղած ուսումնասիրությունները չեն համապատասխանում մեկը մյուսին: Պատճառը, թերևս, բանաստեղծի չափազանց ինքնատիպ անհատականության, ծայրահեղ դրամատիզմի և բարդ, հաճախ իրարամերժ, որոշակի համակարգային մոտեցման չտրվող ստեղծագործական աշխարհն է, որի ուսումնասիրությամբ զբաղվում է Պ. Դեմիրճյանը: Այդ աշխարհի «բանալին» գտնվում է ոչ այնքան արտաքին հանգամանքների (միջավայրի, կրթության, պատմական հասարակական հարաբերությունների), որքան նրա անձնական խռովահույզ կյանքի և ճակատագրի մեջ (հոգեկան լարված կյանքը, ի վերջո, նրան հասցրեց ինքնասպանության, 1908 թվականին): Իր բնույթով Եղիա Տեմիրճիպաշյանի ստեղծագործական դրամատիկ աշխարհը հակադիր է Տիրան Զրաքյանի ներհուն և ներդաշնակ արվեստին, որը, ինչպես ցույց է տալիս Պ. Դեմիրճյանը, իր մեջ ընդգրկում է հեղինակի ձգտումը՝ ազատվել անձնականությունից, հաղթահարել սեփական «Ես»-ի սահմանները, ձուլվել «հոգևոր կոսմոսին», մինչդեռ Եղիա Տեմիրճիպաշյանն այդ ամենը փնտրում է իր սեփական անձնական ճակատագրի մեջ, այդ պատճառով գրականագետը մանրամասնորեն հետևում է նրա կենսագրական տվյալներին, կյանքի ընթացքին: Վերջին տարիներին Պ. Դեմիրճյանը մի շարք գիտաժողովներում հանդես է եկել Տեմիրճի-

պաշյան ինքնատիպ գրողի, հրատարակչի, իմաստասերի, հրապարագրի, մանկավարժի կյանքին և գործունեությանը նվիրված հետաքրքիր զեկուցումներով, որոնք հրապարակվել են հանրապետության գիտական հանդեսներում («Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գրականագիտական հանդես», «ՎԷՄ» և այլն) և գիտական նստաշրջանների նյութերի ժողովածուներում, որոնց ամբողջացումն է բոլորովին վերջերս հրատարակված «Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և գործը կամ «Միշտ ճամփան փնտրող մարդը պիտի ըլլամ»» ծավալուն (600 էջ) մենագրությունը (2025):

Իր ուժերի ծաղկման շրջանում գտնվող գրականագետը Թովմաս Թերզյանին նվիրված մենագրությամբ կավարտի արևմտահայ պոեզիայի ինքնատիպ եռյակի (Թերզյան-Տեմիրճիպաշյան-Ինտրա) ստեղծագործական ուսումնասիրությունը, որը մեծ ներդրում կլինի մեր ժամանակակից գրականագիտության մեջ:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտաահմանյան գրականության, համեմատական գրականության և գրականության տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ գրականության տեսություն, դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության և բազմաթիվ հոդվածների:
ORCID: 0009-0009-7946-1590. henrikedoyan@list.ru